Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 16/01L
Դաս: ՀՊ
«23» նոյեմբերի 2016թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^{6}-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2016 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 12^{00}-ին՝ ք.Երևան, Պուշկինի 19 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի 3-րդ հարկում գտնվող դահլիճում հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ Ժողով) :
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2016 թվականի նոյեմբերի 24-ը:
3. Հաստատել Ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 5-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
7. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահի՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ.Ուզունյան

Հավելված 1
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 23-ի N 16/01Լ որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2016 թվականի դեկտեմբերի 10-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ միանալու մասին,
2. Միացման պայմանագրի հաստատման մասին,
3. Փոխանցման ակտի նախագծի հաստատման մասին:

Հավելված 2
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 23-ի N 16/01Լ որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1.Միացման պայմանագիրը:
2.Փոխանցման ակտի նախագիծը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) 2016 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 12^{00}-ին՝ ք.Երևան, Պուշկինի 19 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի 3-րդ հարկում գտնվող դահլիճում, հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2016 թվականի նոյեմբերի 24-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am)՝ սկսած 2016 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ,
գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյան

Հավելված 3
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 23-ի N16/01Լ որոշման

Հաստատված է 23.11.2016թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի թիվ 16/01Լ որոշմամբ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության

բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Պուշկինի 19	10.12.2016թ.

Օրակարգի հարցերը	քվեարկության տարբերակները					
	կողմ		դեմ		ձեռնպահ	
	կողմ		դեմ		ձեռնպահ	
	կողմ		դեմ		ձեռնպահ	

բաժնետիրոջ բաժնետոմսերի (ձայների) քանակը	բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ ազգանունը և անունը
_____	
	ստորագրությունը

Ծանոթություն. Հարգելի բաժնետեր, Ձեր ընտրության տարբերակի վանդակում նշագրեք “X”, իսկ մյուս վանդակները թողեք դատարկ: Եթե բոլոր վանդակները թողնվեն դատարկ կամ “X” նշանը լրացվի մեկից ավել վանդակներում, ապա քվեարկությունը այս քվեաթերթիկով կհամարվի անվավեր: Հիշեցվում է նաև, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի քվեարկողի կողմից: